Քաղաքացիական Հռչակագիր

Հասարակական կյանքին մասնակցության
համաշխարհային սկզբունքներ

Քաղաքացիական Հռչակագիր

Հասարակական կյանքին մասնակցության համաշխարհային սկզբունքներ

Մենք՝ մարդիկ, իրավունք ունենք հասարակական կյանքի զարգացմանը մասնակցելուն

Մարդու իրավունքները և հիմնարար ազատություններն ամբողջ աշխարհում շարունակաբար ավելի հաճախ են ոտնահարվում: Շարունակաբար ավելի մեծ թվով երկրներում են մարդիկ և կազմակերպությունները դաժանագույն սահմանափակումների հանդիպում և զրկվում հասարակական կյանքի մասնակցության իրենց իրավունքից: Ակտիվիստներին ահաբեկում, դատում, բանտարկում, խոշտանգում և սպանում են: Քաղաքացիական հասարակության ինստիտուտների՝ օրինական հիմքերով բնականոն աշխատանքը խոչընդոտվում է, նրանք զրկվում են ֆինանսավորման աղբյուրներից, նրանց արգելվում է գործել և ստիպում են լուծարվել: Հանրային որոշումների կայացման գործընթացներին մարդկանց մասնակցության հնարավոր ուղիները գնալով սահմանափակվում են և փակվում:

Այնուամենայնիվ, եթե մարդիկ չշարունակեն պայքարել իրենց իրավունքների և մասնակցության համար, աշխարհն ի վիճակի չի լինի հաղթահարելու ներկայումս իր առջև ծառացած ամենասահմոկեցուցիչ մարտահրավերները՝ կայուն տեմպերով աճող աղքատությունը, անհավասարությունը և կլիմայի փոփոխությունը:

Մարդկանց անհատական և խմբային մասնակցությունը կյանքի է կոչում և իմաստավորում ժողովրդավարությունը: Այս մասնակցությունը կենսարար նշանակություն ունի մարդու իրավունքների պաշտպանության, զարգացման, արդար, հավասար և խաղաղ հասարակություններ ձևավորելու գործում: Այսպիսի մասնակցությունն արդեն իսկ պարտադրում է ցանկացած իշխանության դիրքից հանդես եկողների հանրային հաշվետվողականություն՝ հանուն ընդհանուր շահի:

Մենք մերժում ենք հանրային մասնակցության ճնշման ցանկացած փորձ՝ տեղական, տարածաշրջանային և գլոբալ մակարդակներում՝ համայնքներում, երկրներում և մեր ընդհանուր մոլորակում:

Քաղաքացիական հռչակագիրը շրջանակում է հասարակական կյանքին մարդկանց մասնակցության համաշխարհային սկզբունքները

Քաղաքացիական հռչակագիրը հիմնվում է մեր ընդհանուր հումանիստական արժեքների վրա և բխում է աշխարհում ընդունված ազատություններից և սկզբունքներից: Մարդկանց մասնակցության համար այս հռչակագրի սահմանած սկզբունքները բխում են արդեն գոյություն ունեցող միջազգային իրավունքի նորմերից և համաձայնագրերից:

Այս հռչակագրի ընդունումը և կատարումը համապարտադիր է բոլոր կառավարությունների, հանրային կառավարման բոլոր մակարդակների, բիզնեսի և քաղաքացիական հասարակության կառույցների համար ամբողջ աշխարհում:

Մենք՝մարդիկ, ունենք հետևյալ իրավունքները, որոնք պետք է հարգել, պաշտպանել, խրախուսել և ամբողջությամբ կիրառել ամենուր՝ առանց որևէ խտրականության

1. **Արտահայտման ազատություն -** բոլորը կարող են խոսել, քննարկել և ջատագովել իրենց մտքերը և տեսակետները, աջակցել այլոց մտքերին կամ անհամաձայնություն հայտնել դրանց

2. **Տեղեկատվության ազատություն –** ցանկացած հանրային տեղեկատվություն հեշտ հասանելի է յուրաքանչյուրին և տրվում է ճիշտ ժամանակին

3. **3. Հավաքների ազատություն –**յուրաքանչյուր ոք ազատ է այլոց հետ կազմել խաղաղ միավորումներ՝ հանուն ընդհանուր նպատակների և գաղափարների

4. **4. Միավորումների ազատություն –** յուրաքանչյուր ոք ազատ է ոչ բռնի մեթոդներով կազմել միավորումներ, միանալ կամ աջակցել կազմակերպությունների՝ հանուն ընդհանուր նպատակի:

Այս իրավունքների լիարժեք իրացման նպատակով պարտադիր են հետևյալ երաշխիքները

5. Արդյունավետ մասնակցություն–Մարդիկ և կազմակերպությունները կարող են անխոչընդոտ մասնակցել և ազդել հանրային քաղաքականության վրա՝ տեղական, պետական, տարածաշրջանային և համաշխարհային մակարդակներում

6. Ֆինանսական աջակցություն – մարդիկ և կազմակերպությունները կարող են անարգել ունենալ և ստանալ ֆինանսական աջակցություն իրենց երկրից և դրսից

7. Համագործակցության հնարավորություններ – մարդիկ և կազմակերպությունները կարող են անարգել կազմել տեղական և միջազգային երկխոսություններ և տարատեսակ համագործակցություններ

Այս իրավունքներն օրինական են և կարող են իրացվել , եթե դրանք չեն սահմանափակում այլոց իրավունքները, չեն առաջացնում ատելություն, խտրականություն, ագրեսիա կամ բռնություն:

Մարդկանց, իրենց կառավարությունների և հանրային ինստիտուտների միջև առավելագույն փոխշահավետ համագործակցության նպատակով պետք է պահպանվեն հետևյալ սկզբունքները

8. Պաշտպանության պարտավորություն – Յուրաքանչյուր կառավարություն պարտավոր է ապահովել իր տարածքում գտնվող մարդկանց և կազմակերպությունների անարգել մասնակցությունը, որը զերծ է բռնաճնշումներից, խոշտանգումներից կամ կյանքի սպառնալիքներից և խմբային պատասխանատվության չենթարկել իրենց հիմնարար իրավունքները օրինական ճանապարհով իրացնելու համար:

9. Անհրաժեշտ միջավայրի ապահովություն – յուրաքանչյուր պետություն պարտավոր է ապահովել օրենսդիր, վարչական կամ այլ միջոցներ՝ պաշտպանելու, խրախուսելու և իրացնելու այս հռչակագրում նշված իրավունքները, համապատասխական քննություն սկսել անհատների և կազմակերպությունների վրա հարձակումների դեպքերին և կասկածյալ բռարարներին պատասխանատվության ենթարկել տեղական և միջազգային արդարության սկզունքներին համապատասխան

10. Հանրային հաշվետվողականություն – Կառավարությունը, բիզնեսը և քաղաքացիական հասարակության կազմակերպությունները հաշվետու են հանրությանը:

Մեր անհատական և խմբային պատասխանատվությունը

Ամբողջ աշխարհով մեկ մարդիկ և կազմակերպությունները ձգտում են արդարության և արժանապատվության: Նրանց այս մասնակցությունը մեզ հնարավորություն է տալիս մեր այս մարտահրավերները հաղթահարել խմբով: **Անկախ նրանից՝ մենք կառավարության անդամ ենք, բիզնեսի, թե քաղաքացիական հասարակության, մեր խմբային պատասխանատվությունն է ապահովել և աջակցել խաղաղ, արդար և կայուն ապագա մեր բոլոր համար:**

Որպես ստորագրյալներ

- Մենք պահանջում ենք բոլոր կառավարություններից և պետական ինստիտուտներից **հարգել, պաշտպանել, խրախուսել** և ամբողջությամբ իրականացել **բոլոր միջազգային համաձայնագրերը** և պայմանագրերը, որոնցով ամրագրվում են մարդկանց մասնակցության իրավունքները և մենք նաև կոչ ենք անում բիզնեսին, քաղաքացիական հասարակության ինստիտուտներին, միջազգային ինստիտուտներին և այլ դերակատարներին համապատասխանաբար առաջնորդվել վերոնշյալ համաձայնագրերով:
- Մենք պարտավորվում ենք **պաշպանել** այս Հռչակագրով ամրագրված իրավունքների **իրացման պաշտպանությունը:**
- Մենք մեր **համերաշխությունն ենք հայտնում** բոլոր մարդկանց, որոնց մասնակցելու իրավունքը իրենց համայնքների զարգազմանը խոչընդոտվում է: